



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՅՈՒՆԻՍ, 2018

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻՍ. ԵՆ ՈՂՈՐՄԵԱ ՔՈ արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

### ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԲԸ ԿԵԱՆՔԻ ԼՈՅՍ Է

**Խ**օսքդ նրագ է փայլերուս,  
լուսաւորող՝ նամարներուս:  
Երդում ըրի եւ խոստացայ՝  
արդար վնիռներդ գործադրել:  
Տառապանքս շատ ծանր է, Տէր,  
կեանք տուր ինձի, քո խոստումիդ համաձայն:  
Աղօթքներս կամաւոր ընծայի տեղ ընդունէ, Տէր,  
եւ օրէքներդ ստրկեցուր ինձի:  
Թէպէտ կեանքս յարատեւ վտանգի մէջ է,  
սակայն Օրէնքդ չեմ մոռնար բնաւ:  
Ամբարիշտները ինձի համար թակարդ լարեցին,  
սակայն ես չշեղեցայ հրահանգներէդ:  
Ինձի յաւիտեանական ժառանգութիւն դարձուցի պատուիրաններդ,  
որովհետեւ սրտիս ուրախութիւն եմ անոնք:  
Որոշած եմ կանոններդ կատարել,  
այդ է յաւիտեանական վարձատրութիւնս:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՐՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոգևանի լիցի Ի վերայ իմ Ի տուէ եւ Ի գիշերի,  
Ի նստիլ Ի տան, Ի գնալ Ի նանապարհ,  
Ի ննջել եւ Ի յառնել, գի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ  
ԳԼՈՒԽ 2:24-29

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ (2:24-29)

Աստուածաշունչը կարդալու եւ ըստ այնմ հասկնալու սկզբունքներէն մէկն է շրջագիծ հասկացողութիւնը, այսինքն՝ փութալ հասկնալու, նախադասութիւնը կամ բառը կարդալ եւ ըստ այնմ հասկնալ իր իսկ շրջագիծին մէջ: Շրջագիծէն դուրս հանել որեւէ մէկ նախադասութիւն կամ բառ կը դառնայ վրանգաւոր: Ահա այդ երեւոյթներէն մէկը կարելի է համարել այս հասկնալու:

Յովհաննէս Առաքեալ երբ կը խօսի Քրիստոսի հակառակորդին մասին յստակօրէն ցոյց կու տայ թէ ով է Քրիստոսի հակառակորդը, եթէ ոչ ան որ կ'ուրանայ Յիսուսը Քրիստոսն է, կ'ուրանայ թէ՛ Հայրը եւ թէ՛ Որդին: Որովհետեւ «ով որ կը մերժէ Որդին՝ Հայրն ալ մերժած կ'ըլլայ. իսկ ով որ կ'ընդունի Որդին՝ Հայրն ալ ընդունած կ'ըլլայ» (22-23 հմբ): Այս բացատրութեան լոյսին փակ կը շարունակէ իր միտքը ըսելով. «**Հերեսաբար, դուք ձեր սրտին մէջ պահեցէք Տիրոջ խօսքերը, որ սկիզբէն լսեցիք, ...սկիզբէն ստրվեցաք**» (24 հմբ): Այն խօսքերը, որոնք ոչ միայն իյնկան իբրեւ սերմնահատիկ, այլ՝ պէտք է որ արմատ նետած ըլլան այդ սերմերը: Իսկ խօսքերը կը վերաբերին այն Աւետարանի քարոզութեան, որ Հօրը եւ Որդին մասին են: Քրիստոս Ինք խոստացաւ այս բոլորը որպէս յաւիտենական կեանք: Յաւիտենական կեանքն է Հօրը եւ Որդին հետ միացած մնալը: Քրիստոս այսպէս ալ խոստացաւ ըսելով. «**Ես եւ Հայրս պիտի գանք եւ անոր մէջ բնակինք**» (Յովհ 14:23-26):

Առաքեալը կոչ կ'ընէ, կը յիշեցնէ, կը գրէ, որպէսզի չ'ըլլայ թէ մէկը ձեզ մոռորեցնէ (26 հմբ): Որովհետեւ արդէն իսկ կան այդպիսիներ, որոնք սկսած են մոռորեցնելու, մտքերը պղտորելու: Ամբողջ քարոզարշարը ուրանալ Քրիստոսը, Անոր աստուածութիւնը, Անոր մարդեղութիւնը, ուրանալ Յիսուսը՝ Քրիստոսն է հանգամանքը: Եւ արդէն ուրանալ Քրիստոսը, կը նշանակէ ուրանալ Հայրը:

Առաքեալը կը վերյիշեցնէ, որ ձեր մէջ Սուրբ Հոգին կայ ու կը գործէ, ուրեմն այնքան արեւն որ կայ ու կը գործէ Ինք է որ ձեզ կը ստրվեցնէ ու պիտի ստրվեցնէ, ուրեմն պէտք չունիք ուրիշ մէկէն ստրվելու: Մանաւանդ՝ երբ այդ ուրիշ մէկը ձեզի ստրութիւնն է որ պիտի փորձէ ստրվեցնել: Որովհետեւ Սուրբ Հոգին կը ստրվեցնէ ինչ որ ճշմարիտն է: Սուրբ Հոգին կը ստրվեցնէ ինչ որ անհրաժեշտ է փրկութեան համար: Կը ստրվեցնէ այն ինչ որ անհրաժեշտ է Եկեղեցւոյ շինութեան, հաւաքացեալի հոգեւոր աճման: Ահա այդ նոյն Սուրբ Հոգին է որ կը ստրվեցնէ Հօրը եւ Որդին մասին ճշմարտութիւնը: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «**Ուստի կ'ուզեմ որ հասկնաք, թէ ոեւէ մէկը որ Աստուծոյ Հոգին մոռնալ կը շօսի՝ չի կրնար ըսել՝ «Նզովեալ ըլլայ Յիսուս»: Նոյնպէս ալ, ոչ ոք կրնայ խոստովանիլ թէ «Յիսուս Տէր է», եթէ Սուրբ Հոգին չունենայ» (Ա Կորնթ 12:3): Իսկ Հռոմայեցիներուն նմակաին մէջ պիտի ըսէ. «**Դուք Սուրբ Հոգին սրացաք՝ Աստուծոյ որդիներ ըլլալու համար: Այդ Հոգիով է որ զԱստուծոյ «Աքբա», այսինքն՝ Հայր կը կոչենք**» (Հռոմ 8:15): Ուրեմն, շատ յստակ է, որ Սուրբ Հոգին է որ մեզի կը ստրվեցնէ Հօրը եւ Որդին մասին: Ուրեմն անկէ դուրս ուրիշ բան չէ եթէ ոչ ստրութիւն: Սա կը նշանակէ, Առաքեալը ոչ թէ կու գայ ըսելու թէ այլեւս ուսուցիչներու կարիքը չունինք, այլ՝ Սուրբ Հոգիով առաջնորդուած, Սուրբ Հոգիի շնորհներով լեցուած ուսուցիչներ, որպէսզի ճշմարտութիւնը ստրվեցնեն: Այլ խօսքով, եթէ երբեք յանկարծ ուսուցիչներ, որոնք այս կամ այն ձեւով կը մերժեն կամ կ'ուրանան Հայրը եւ Որդին, կը նշանակէ Սուրբ Հոգիով չէ որ կը խօսին, այլ՝ Չարին: «**Ուստի Քրիստոսի միացած մնացէք, ինչպէս որ Սուրբ Հոգին ձեզի ստրվեցուց**», յանկարծ այնպէս ըլլայ, որ Քրիստոսն հեռանաք:**

Առաքեալ, որպէս հայր, կոչ կ'ուղղէ, Քրիստոսի միացած մնալու, «**որպէսզի Քրիստոսի գալստեան օրը երբ Քրիստոս յայտնուի՝ ամօթով չմնանք**», ոչ գողը, ոչ լսողը ոչ ալ կարդացողը, «**այլ համարձակօրէն կազնինք Անոր դիմաց**» (28 հմբ):

Արդար է անիկա, եւ Իրմէ արդարութիւն կը բոլիս, իսկ ով որ Անոր հարազատ գաւակն է, արդարութիւն կը գործէ: